



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 28 ԱՊՐԻԼ, 2025

### ՏԵՐՈՒՍԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն պարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

#### ՇԱՐԱԿԱՆ

**Յոյս իմ ես դու տէր քաւիչ յանցանաց իմոց.**

**մի անտես առնէր զբըրլխումն արտասուաց իմոց.**

**ողորմեա ինձ աստուած:**

#### ԱՂՈԹՔ

Հովիւ քաջ, հովիւ բարի եւ յաւիտեանական, նայէ եւ եկուր օգնէ քու բանաւոր հօտիդ, որ քու շուրջդ հաւաքեցիր գթութեամբդ: Որովհետեւ քու դիմացդ կանգնած՝ քու ողորմութեանդ եւ գթութեանդ կը սպասեմք, Տէր: Օրհնէ բոլորս, իմաստնացուր, լուսաւորէ, եւ բոլորիս պարգեւէ եր-կինքի արքայութիւնդ. որովհետեւ Դուն ես կեանքի տէրը, ողորմած Աստուած, եւ քեզի կը վայելեն փառքը, իշխանութիւնն ու պատիւը, յա-ւիտեանս. ամէն:

#### ՇԱՐԱԿԱՆ - ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾ

*Սուրբ Աստուած, սուրբ եւ հօգօր, սուրբ եւ անմահ, որ յարեար ի մեռելոց, ողորմեա մեզ:(X 3)*

Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վրանգից մերոց: Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք: Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարե-խօսութեամբ սուրբ Աստուածածնին, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան Տեառն Աստուծոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ւ եւ ողորմեա:

#### ՇԱՐԱԿԱՆ - ԱՂՈԹՔ

**Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:**

**Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:**

**Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:**

**Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:**

**Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:**

# ՍԱՂՄՈՍ 80

## ԱՂՈԹՔ ԱԶԳԻՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԻՆ ՀԱՄԱՐ

Ով դուն՝ Հովիւր քու ժողովուրդիդ, ականջ տուր մեզի,  
դուն՝ առաջնորդը քու հօտիդ, լսէ մեզ,  
դուն՝ որ քերականներով շրջապատուած քու աթոռիդ կը նստիս,  
ինքզինքդ յայտնէ Եփրեմի, Բենիամինի եւ Մանասէի ցեղերուն դիմաց:  
Ցոյց տուր զօրութիւնդ, եւ եկուր փրկէ մեզ:  
Մեզ մեր երկիրը վերադարձուր, ով Աստուած,  
մեզի հանդէպ բարեհան եղիր, եւ մենք պիտի փրկուինք:  
Ով Տէր, Ամենակալ Աստուած, դեռ մինչեւ ե՞րբ բարկութիւնդ պիտի ծխայ,  
եւ պիտի մերժես ժողովուրդիդ աղօթքները:  
դեռ մինչեւ ե՞րբ արցունքով պիտի ուտենք մեր հացը,  
եւ արցունքը պիտի ըլլայ մեր ամբողջ խմելիքը:  
Ինչո՞ւ թոյլ կու տաս, որ դրացի ազգերը կռուախնձոր դարձնեն մեր երկիրը,  
եւ մեր թշնամիները մեր վրայ խնդան:  
Մեր երկիրը վերադարձուր մեզ, Ամենակալ Աստուած,  
մեզի հանդէպ բարեհան եղիր, եւ մենք պիտի փրկուինք:  
Եգիպտոսէն հանեցիր ու Քանաան բերիք մեզ, քու որթատունկդ.  
բնիկ ազգերը վտարեցիր այնտեղէն, եւ անոնց տեղ զայն տնկեցիր:  
Տեղ պատրաստեցիր անոր համար, եւ զայն այնտեղ արմատացուցիր,  
եւ անիկա ամբողջ երկիրը լեցուց:  
Լեռները անոր շուփին տակ ծածկուեցան,  
եւ բարձրագոյն մայրիներն իսկ անոր ոստերով ծածկուեցան:  
Անիկա իր նիւղերը տարածեց մինչեւ ծով, իր բողբոջները՝ մինչեւ գետ:  
Ինչո՞ւ անոր ցանկապատները փլցուցիր,  
թոյլ տալով որ նամբայէն ամէն անցնող փրցնէ անոր ողկոյզները,  
վայրի խոզեր աւերեն զայն, վայրի գազաններ անոր մէջը արածին:  
Ով Աստուած Ամենակալ, կ'աղաչեմք՝ վերադարձիր,  
նայէ երկինքէն, տես վիճակը որթատունկիդ,  
եւ օգնութեան հասիր այս որթտունկին՝ որ քու աջովդ տնկեցիր,  
այս մատղաշ տունկին՝ որ դուն ինքդ զօրացուցիր:  
Անոնք՝ որոնք զայն կտրեցին ու կրակով այրեցին՝  
թող քու ներկայութեամբդ յանդիմանուին ու կորսուին:  
Իսկ քու ժողովուրդիդ վրայէն անպակաս ըրէ քու պաշտպան ձեռքդ,  
աջովդ պահպանէ քու ժողովուրդդ, ու դուն ինքդ զօրացուցիր:  
Եւ մենք այլեւս քեզմէ պիտի չհեռանանք.  
ողջ պահէ մեզ, եւ մենք միայն քեզ պիտի պաշտենք:  
Մեզ մեր երկիրը վերադարձուր, Տէր, Ամենակալ Աստուած,  
մեզի հանդէպ բարեհան եղիր, եւ մենք պիտի փրկուինք:



ԱՂՕԹԸ ԱԶԳԻՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԻՆ ՀԱՄԱՐ

Ասկէ առաջ անդրադարձանք այն երեւոյթին, թէ Սաղմոսները միայն անհապական բնոյթ չունին, այլ նաեւ ազգային: Միայն անհապի համար աղօթք չէ, նաեւ ազգի վերականգնումին համար աղօթք կը խնդրուի: Ահա անոնցմէ մէկն է այս Սաղմոսը: Երկրորդ, ամէն մէկ Սաղմոս ունի իր բացատրական թէ ինչ առիթի համար ըսուած եւ կամ որու կողմէ: Այս պարագային Ասաֆի ժողովածուէն է, բայց հետաքրքրականը այն է, թէ ունի "Պապուիրան" կամ "Պապուիրան շուշան" բացատրութիւնը, որուն մէջ կ'արժէք պարկերացուի որպէս Ասպուծոյ ժողովուրդը ի մէջ փշոց, շուշանը փուշերու մէջ: Ասպուծոյ ժողովուրդը այս աշխարհի փուշին ու չարութեան մէջ: Ահա թէ ինչու Քրիստոս Իր աղօթքը ըրաւ ըսելով. «Հայր կ'աղօթեմ ոչ թէ զիրենք այս աշխարհէն վերցնես, այլ՝ չարէն պահես»: Այսօր ալ հաւաքացեալները, որպէս շուշաներ, աշխարհի չարութեան մէջ, փուշերու մէջ, որուն դիմաց Ասուծոյ օգնութիւնն որ կը խնդրեն, այնպէս ինչպէս այս Սաղմոսը այդ օգնութիւնն է որ կը խնդրէ:

Աւելի դիւրին հասկնալու համար, կարելի է Սաղմոսը բաժնել երեք մասին: 1-3, 4-7, 8-19 համարները: Նոյն խնդրանքը քանի մը անգամներ կը կրկնուի. «Վերադարձիր ու մեզ վերադարձուր» 3, 7, 19 համարները: Նախ ամէն բանէ առաջ անոր սկիզբի արքայապարտութիւնը կը ներկայացնէ թէ ով է Ասպուծ Իր ժողովուրդին համար, եւ կամ Ասպուծոյ ժողովուրդը որպէս ինչ կ'ընդունի զԱսպուծ: Զայն կ'ընդունի Հովիւ: Այս արքայապարտութիւնը կը յիծեցնէ Դաւիթի 23-րդ Սաղմոսը, «Տէրը իմ Հովիւս է»: Իբրեւ այդպիսին, կը խնդրէ որ ականջ փայ եւ լսէ Իր հօտին կանչը, աղօթքը, որովհետեւ ըսար երեւոյթին աղօթքները ալ չեն լսուիր ու չեն պարասխանուիր: Յաճախ այդ վիճակին մէջով նաեւ կ'անցնինք մենք, երբ կ'աղօթենք եւ կարծէք այդ աղօթքները մնան օդին մէջ: Հետաքրքրականը, սակայն, որ րեւի չի փար, այլ՝ դարձեալ կը խնդրէ որ լսէ: Կը խնդրէ այն Ասպուծմէ, որ քերովքէներով շրջապարտուած աթոռին կը նստի: Այս արքայապարտութիւնը, Ասպուծոյ ողորմութեան աթոռն է: Ասպուծոյ ողորմութիւնն է որ կրնայ մեզ փրկել: Հետաքրքրականօրէն անուններով կը յիշէ, եւ կը խնդրէ որ Ասպուծ ցոյց փայ իր գօրութիւնը եւ փրկէ, վերադարձնելով այն երկիրը որ Ասպուծ փուսա իրենց: Այսպէղ պարզապէս վերադառնալու մասին չէ, այլ այս վերադարձի նկարագրի փոփոխութեան վերադարձ: Եւ այս վերադարձը միայն Ասպուծ կրնայ ընել: Նաեւ Ասպուծոյ բարեհաճութիւնը կը խնդրուի: Մէկ բարեհաճութիւն մը, ամբողջ կացութիւնը կը փոխէ:

Հովիւի պարկերէն կ'անցնի Ամենակալ Ասպուծ արքայապարտութեան, եւ հարց կու փայ թէ մինչեւ ե՞րբ Ասպուծոյ բարկութիւնը պիտի ծխայ, անոր մէջ կ'երեւի կրակի նման բոբբոբում: Ուրեմն Ասպուծ բանէ մը բարկացեր է, որուն արդիւնքը Իր ժողովուրդին աղօթքները կը մերժուին: Ապա կը ներկայացնէ, թէ սուգի վիճակ մըն է որ կ'ապրին, որովհետեւ իրենց հացը արցունքով խառնուած, իսկ խմելիքը իրենց իսկ արցունքը: Տակաւին, դրացի ազգերուն ալ թոյլ կը փրուի որ կռուախնձոր դարձնեն երկիրը, եւ անոնց պարպութեամբ ուրախանան: Երկրորդ անգամ նոյն խնդրանքը: Եւ յանկարծ անցեալի վերոյշումը, թէ ինչպէս զիրենք դուրս բերաւ Եգիպտոսէն, որպէս որթափունկ եւ Քանաանու երկրին մէջ փնկեց արմա-փացուց, նոյնիսկ լեռներն ու մայրի ծառերը անոր շուքով ու ոսպերով ծածկուեցան: Իսկ անոր ճիւղերը մինչեւ ծով ու գետ փարածուեցան: Նոյն արքայապարտութիւնը կը գրենք Քրիստոսի խօսքերուն մէջ, «Ես եմ որթափունկը, իսկ դուք ճիւղերը»: Այսօր եկեղեցին իբրեւ այդպիսին պէտք է գործէ նաեւ: Այս փարածումը կ'ըլլայ երբ Ասպուծոյ հովանին կը վայելէ, այլապէս, յաջորդ համարը կու գայ ըսելու. «Ինչո՞ւ անոր ցանկապարները փլցուցիր, թոյլ փալով որ ճամբայէն ամէն անցնող փրցնէ անոր ողկոյզները, վայրի խոզերը աւերեն, վայրի գազանները անոր մէջ արածին», կը դառնայ անպէտք: Ուստի կը խնդրեն ու կ'աղաչեն, որ Ամենակալ Ասպուծ եր վերադառնայ եւ օգնութեան հասնի այս որթափունկին, որ Իրեն կը պարկանի, ինք փնկեց ու ինք գօրացուց: Կը խնդրէ նաեւ որ Ասպուծոյ հեղանին ու պաշտպանութիւնը անպակաս ըլլայ: Իսկ կը խոստանան, որ ալ Ասպուծմէ պիտի չհեռանան ու միայն զԱսպուծ պաշտեն: Դարձի, զղջումի, ու ապաշխարութեան աղօթք:

*Պահապան ամենայնի Քրիստոս,  
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ քազմամեղիս:*